ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ ԳԱԱ հայագիտական հետազոտությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամից «Արևելյան Աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարանի (Armenian Digital Library of Oriental Sources)» շրջանակներում կատարված աշխատանքի հաշվետվություն.

(1 ապրիլի – 30 հունիսի 2019 թ.)

Թվային գրադարան ստեղծելու համար կատարվել են հետևյալ աշխատանքները.

ա/ «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան» (այսուհետ՝ ԱԱՀԹԳ) ծրագրի շրջանակում, երեք աշխատակիցների (համակարգող մասնագետ Գ. Մարգարյան, օպերատոր-մատենագետներ Ա. Ավետիսյան և Է. Ղազարյան) միացյալ ջանքերով, թվային շտեմարան է մուտքագրվել արևելագիտությանն ու արևելյան աղբյուրագիտությանն առնչվող շուրջ 1100 միավոր գրականություն՝ աղբյուրներ, հետազոտություններ, թարգմանություններ (հայալեզու, արաբերեն, օսմաներեն, պարսկերեն, վրացերեն, հունարեն) ինչպես նաև արևելյան աղբյուրագիտությանը վերաբերող շուրջ 150 սկզբնաղբյուր և ձեռագիր, 250 գիտական հոդված գիտական տարբեր պարբերականներից:

բ/ Կազմվել է Մատենադարանի քարտարանի հիման վրա ցուցակագրված, հասանելի պարսկալեզու սկզբնաղբյուրների (բնագրային հրատարակություններ, բնագրային թարգմանություններ) համապատասխան ցուցակ, ինչպես նաև Մատենադարանի Արաբատառ քարտարանից դուրս է գրվել և պատրաստվել շուրջ 100 անուն օսմաներեն, պարսկերեն, ժամանակակից թուրքերեն և արաբերեն հրատարակված գրքերի և ձեռագրերի ցանկ, նույն սկզբունքով դուրս է գրվել և մուտքագրվել ադրբեջաներեն համարվող գրականության ցանկը հետագա մուտքագրման համար: Երևանի Մաշտոցի անվ. Մատենադարանի աջակցությամբ միկրոֆիլմից սկանավորվել է շուրջ 40 կտոր եվրոպական գրականություն և Բրիտանական թանգարանի ու Վատիկանի երկու հայերեն ձեռագիր: Սկանավորումը կատարվել է Մաշտոցի անվ. Մատենադարանի մեքենայով:

գ/ Մուտքագրված գրականությանն ավելացել է շուրջ 500 անուն նոր մուտքագրում, որոնք լրացվել են էլեկտրոնային հղումներով և «Արևելյան աղբյուրագիտութ-

յան Հայաստանի թվային գրադարան»-ի էջում դրանք հասանելի են թվային տարբերակով:

դ/ Իրականացվող աշխատանքի այս փուլում սկանավորվել և թվայնացվել են 50 GB ծավալով մի քանի տասնյակ աղբյուրագիտական հետազոտություններ, ինչպես նաև 600 GB ծավալով սկզբնաղբյուրներ և հետազոտություններ, որոնք հընթացս մուտքագրվում են թվային շտեմարան: Այդ գրքերի մեջ սկանականավորվել են Արևելագիտության ինստիտուտի «Արևելյան աղբյուրագիտություն» (1 հատոր), «Кавказ и Византия» (6 հատոր), «Древный Восток» (5 հատոր) պարբերականները, ինստիտուտի աշխատակիցներ Արամ Տեր-Ղևոնդյանի (2 գիրք), Պավել Չոբանյանի (3 գիրք), Պ. Մուրադյանի (4 գիրք), Ազատ Բոզոյանի (4 գիրք), Ալեքսան Հակոբյանի (3 գիրք), Քրիստինե Կոստիկյանի (3 գիրք), Հարություն Ժամկոչյանի (6 գիրք), Հասմիկ Մկրտչյանի (1 գիրք), Լորետա Դանեղյանի (1 գիրք) և այլոց մենագրությունները (ընդամենը՝ 40) և հոդվածները (շուրջ 200): Այս գրականության սկանավորումը կատարվել է «ԱԱՀԹԳ» էլեկտրոնային գրադարանին ՀՀ ԳԱԱ ՀՈՒՖՀՀ դրամաշնորհի շրջանակներում ձեռք բերված մեքենայով:

ե/ Վերախմբագրվել է «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան»-ի թվային էջի՝ http://e-libros.asnet.am/ աշխատանքային տարբերակը, որն արդեն երկու ամիս է, ինչ հասանելի է Koha համակարգում: Այստեղ ընթերցողը կարող է կատարել փնտրտուք այն մեկ տեռաբայթի սահմաններում, որ մեզ է տրամադրել ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի ինստիտուտը: Փնտրտուքի արդյունքում գտնված ողջ էլեկտրոնային գրականությունը բաց մատչելիության է և հասանելի հետազոտողներին:

զ/ «ԱԱՀԹԳ» թվային գրադարանը ներկայացվել է «Արևելյան Աղբյուրագիտությունը Հայաստանում ԻԱ դարի սկզբին» միջազգային գիտաժողովում (20-21 հունիսի 2019 թ.) և **արժանացել է մասնակիցների դրվատանքին**: Երուսաղեմի, Բոլոնիայի և Միչիգանի (ԱՄՆ) համալսարանների Արևելագիտության ինստիտուտների ներկայացուցիչներն իրենց աջակցությունն են հայտնել գրադարանին սատար կանգնելու գործում: Գրադարանում կատարված աշխատանքի մասին պատմող տեսանյութը դրվել է «ԱԱՀԹԳ» գրադարանի կայք էջ:

թեմայի ղեկավար՝ Ա. Բոզոյան

28.06.2019 թ.

ՀՀ ԳԱԱ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Հայ գրականության պատմության աղբբեջանական կեղծարարությունների հերքումը» թեմայի երրորդ եռամսյակում կատարված աշխատանքի

01.04.2019 – 30.06.2019

Նախորդ երկու եռամսյակներում քննությունը եթե իրականացվել է ըստ հեղինակների, թե «աղվանական» համարվող մատենագիրներից յուրաքանչյուրը ինչպես է ներկայացվում և ինչ փաստարկներ են փորձում բերել նման հիմնավորման համար, ապա այս եռամսյակում քննությունը ընթացել է ժանրային-տեսական վերլուծության ուղիով:

Քննության առարկա յուրաքանչյուր հեղինակ դիտարկվել է նախորդ շրջանի հայ գրականության և տվյալ ժանրի երկի ընդհանուր համատեքստում:

Վեր են հանվել այն տիպաբանական հատկանիշները, որոնք տվյալ ստեղծագործության մեջ գալիս են նախորդող շրջանի հայ գրականությունից:

Այս առումով առանցքային կարևորություն ունի Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը, որը դիտարկվել է տեղային պատմությունների շրջանակում՝ Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» երկի և ավելի մեծ կտրվածքով Ստեփաննոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» պատմագրական գործերի հետ:

Նշվում է, որ Կաղանկատվացին թեև տեղային որոշակի հայրենասիրությամբ ձգտել է բարձրացնել երկրամասի դերը, սակայն նրա մտածողությանը ևս բնորոշ է Մեծ Հայքի ընդհանուր միասնության գաղափարը և մաս կազմելը Հայոց եկեղեցու նվիրապետությանը և պաշտամունքային ընդհանուր համակարգին: Մեկ առ մեկ թվարկվում են նման օրինակները՝ Ղազար Փարպեցու Արարատյան դաշտի և Մովսես Կաղանկատվացու Պատմության մեջ Աղվանքի նկարագրության զուգահեռով, Գրիգոր Լուսավորչի, որպես Մայր եկեղեցու հիմնադրի գաղափարի և Լուսավորչի մասունքներից մաս ունենալու ըմբռնման և այսպես շարունակ:

Հատուկ ուշադրություն է դարձվել բայական դիմաձևերին, որոնցում Հայոց աշխարհը ոչ թե երրորդ դեմքով է, այլ առաջին և Աղվանքը մաս է կազմում համահայաստանյան հոգևոր-մշակութային համակարգին:

Նման մոտեցմամբ են ուսումնասիրվել առավել փոքր ժանրերի ստեղծագործությունները, ինչպես կանոնական իրավունքին վերաբերող կանոնախմբերը և կանոնական թղթերը, որոնք համեմատվել են «Կանոնագիրք Հայոցի» հետ:

Միջնադարյան որևէ ստեղծագործության ինքնուրույն կամ թարգմանական երկ լինելու որոշման գործում կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե դրանում առկա աստվածաշնչային մեջբերումները որքանով են համապատասխանում Աստվածաշնչի տվյալ լեզվով թարգմանության բնագրին: Խմբի աշխատակից բ.գ.թ. Հ. Որսկանյանը համոզիչ ձևով ցույց է տվել, որ Կաղանկատվացու Պատմության Աստվածաշնչից եղած բոլոր հատվածները համընկնում են Աստվածաշնչի նախակիլիկյան շրջանի բնագրի հետ, որը մեկ անգամ ևս գալիս է հաստատելու, որ այս գործը թարգմանական չէ:

Ավելին, Աստվածաշնչի հայկական բնագրին են համապատասխանում Կաղանկատվացու գործի մեջ եղած ոչ միայն սուրբգրային հատվածները, այլև այն հատվածները և տողերը, որոնք որպես գրական դարձվածքներ, պատկերներ և համեմատություններ են օգտագործված պատմիչի կողմից, որն արդեն բացառում է թարգմանական հարմարեցումը հայերենում: Այն ցույց է տալիս, որ պատմիչի լեզվամտածողությունը խարսխված է եղել Աստվածաշնչի հայկական բնագրի վրա:

Կաղանկատվացու երկի մեջ եղած սրբախոսական տարբեր ժանրերի՝ վարք, վկայաբանություն, տեսիլ, ներբող և այլն, քննությունը ևս ցույց է տալիս, որ դրանք գրվել են հայ սրբախոսական գրականության, տվյալ ժանրերի գրական կանոնով և մասն են կազմում հայ սրբախոսական գրականությանը: Տարբեր սրբերի մասին Կաղանկատվացին գրելով ոչ թե հետևել է վարքագրական կոդի համաքրիստոնեական ընդհանուր սկզբունքներին, այլ վերջինիս հայկական տեղայնացված այն տարբերակին, որը մատնանշում է Ք. Տեր-Դավթյանը IV – IX դարերի հայ վարքագրությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ:

Դավթակ Քերթողի Ողբը, որը մինչև այժմ պատմա-բանասիրական համակողմանի քննության է ենթարկվել, ներկայացվում է գրականագիտական նոր քննությամբ, որպես լրացուցիչ փաստարկ վերջինիս հայերեն գրված և ոչ թե թարգմանություն լինելու:

Խմբի մյուս անդամ բ.գ.թ. Է. Գալոյանը մեթոդաբանական նույն եղանակով զբաղվել է Համամ Արևելցու երկերի քննությամբ:

Համամ Արևելցու պահպանված շարականը քննվում է հայ շարականագրության ընդհանուր համատեքստում: Կաղանկատվացուց հետո երկրորդ առանցքային հեղինակն է, ում բազմաբնույթ ստեղծագործություններից պահպանված Սողոմոնի առակների և Քերականության մեկնությունները ցույց են տալիս, որ դրանք գրված են հայ մեկնաբանական գրականության հետևողությամբ: Մեկնությունը կատարվել է ըստ Աստվածաշնչի հայկական թարգմանության:

Հայկականությունը առավել հստակ և անհերքելի փաստերով է երևում Դիոնիսիոս Թրակիացու «Մեկնութիւն քերականի» գործի դեպքում, որովհետև մեկնությունը կատարված է հունարենի և հայերենի հնչյունաբանության և ընդհանրապես քերականական համակարգերի համեմատությամբ և ոչ թե հունարեն ու Աղվանքի որևէ լեզվի քերականությունների համեմատությամբ:

Ժանրային նման քննությամբ որպես ընդհանուր տեսական եզրակացություն այն միտքն է ընդգծվում, որ Հայոց Արևելյան կողմանց գրականությունը ոչ թե ընդգծված տարբերակիչ ինքնուրույն հատկանիշներ ունի հայ գրականությունից, այլ հայ գրականության ընդհանուր շարադրանքում տեղային մի շարք յուրահատկություններ ունի, որոնք բնորոշ են Վասպուրականի, Լոռիի և Հայաստանի մի շարք այլ երկրամասերի ևս:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

Խմբի ղեկավար

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Արցախի ազատագրված տարածքների ամրոցների հետազոտություն» թեմայի 2019 թ երկրորդ եռամսյակում կատարված աշխատանքների

01.04.2019-30.06.2019

Եռամսյակը սկսվեց ԱՀ ՄԵՀԶ նախարարության կազմակերպած, մեր հետազոտությունների նյութերով ստեղծված, Արցախի ազատագրված տարածքների ամրոցների պաստառների ցուցադրության շնորհանդեսով: Շնորհանդեսը տեղի ունեցավ Ստեփանակերտի Մշակութի և երիտասարդության պալատում և լայն արձագանք գտավ տեղի ԶԼՄ-ներում:

Հաշվետու ժամանակաշրջանում խումբը կատարել է լայնածավալ դաշտային հետախուզական և հետազոտական աշխատանքներ, հիմնականում ԱՀ Հադրութի և Շահումյանի շրջաններում: Բացի մինչ այժմ հայտնի և ԱՀ պատմամշակութային հուշարձանների պետական կադաստրում գրանցված Սարիկ, Թովմասաբերդ և Հանդաբերդ հռչակավոր ամրոցներից խումբը, հետախուզական աշխատանքների արդյունքում հայտմաբերել և ուսումնասիրել է ևս 4 նորահայտ ամրոցներ, որոնք բացահայտվեցին այս տարվա մայիս-հունիս ամիսների ընթացքում: Այսպես, Հադրութի շրջանի Արևշատ գյուղի մոտի ազատագրված տարածքում է գտնվում տեղացիների կողմից Շահարջիկ անվանվող միջնադարյան քաղաքատեղին: Այն շրջապարսպով ներփակված, հինգ թաղամասերից բաղկացած, միջնաբերդով և մոտ 1,0 կմ երկարությամբ ձգվող, ձորամիջյան կամրջից սկսվող երկարաձիգ քարաշեն ճանապարհով բնակատեղի է: Ուշագրավ է, որ ի տարբերություն Արցախի մյուս ամրոցների, այս քաղաքատիպ բնակավայրը կառուցապատված է եղել քարաշեն հիմնապատերի վրա բարձրացող հում աղյուսե պատերով:

Շահումյանի շրջանում հռչակավոր Ծար իշխանանիստ բնակավայրի ընդարձակ հրվանդանի արևմտյան վերջավորությունում բացահայտվեց Ք. ա. 1-ին հզ-ից մինչև վաղ միջնադար գոյատևած ոչ մեծ մի ամրոց (Ծառ 1): Նույն Ծար բնակավայրի հարավ-արևելքում, խորը ձորի հանդիպակաց սարահարթում, նախկին Զիվել գյուղի մոտ հայտնաբերվեց մի շատ ուշագրավ, վաղ միջնադարյան բնակատեղի-քաղաքատեղի: Այն

ունի արևելյան եզրի բարձրադիր բլրին նստած հստակ առանձնացող միջնաբերդ և սարահարթին սփռվող ընդարձակ բնակատեղի՝ շահաստան: Հատկանշական է, որ ավելի քան 1.0 կմ ձգվող բնակատեղիի ձորաեզրից հնարավոր մոտեցման բոլոր ուղիները փակված են քարաշեն պարսպագծերով:

Առանձնհատուկ պետք է նշել նոր հայտնաբերած Քարվաճառ 1 ամրոցը: Քարվաճառ քաղաքը նստած լինելով բարձրադիր, ուղղահայց ժայռերով կտրվող սարահարթին, ինքնին բնական ամրոց է: Բայց այս սարահարթի ծայր հյուսիս-արևելյան եզրի, ձեռակերտ խանդակով բաժանված հատվածում տեղակայված է անտիկ-վաղ միջնադարյան մեծ ամրոց: Մինչ ազատագրումը, գառնարած բնակիչները ամրոցի պարսպագծերի վրա շարել են անասնափարախներ զգալիորեն խաթարելով հուշարձանի արտաքին տեսքը: Բայց և այնպես, նորաշեն պատերի տակ պահպանվել է երբեմնի հզոր ամրոցի պարիսպներն ու բնակելի շինությունները: Այս ամրոցի հայտնաբերումը ևս մեկ, ծանրակշիռ փաստարկ է Քարվաճառը հին հայկական բնակավայր լինելու գործում:

Խումբը շարունակում է նյութերի կաներալ մշակումը, պաստառների ցուցադրությունը լրացնելու և նյութերը հրատարակության պատրաստելու ուղղությամբ:

«Արցախի ազատագրված տարածքների
ամրոցների հետազոտություն»
թեմայի ղեկավար Գ.Մ.Սարգսյան՝

28.06.2019

ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«ՓԱՓՈՒԿ ՈՒԺԸ ՈՐՊԵՍ ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԻ ԻՐԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ»

ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

01.04.2019-30.06.2019

Պայմանագրով նախատեսված համապատասխան 2019թ. երրորդ եռամսյակային (ապրիլ, մայիս, հունիս) ժամանակահատվածի համար հետազոտական խումբը կատարել է հետևյալ աշխատանքները.

1. Փափուկ ուժի տեսական հարցերի պռոյեկտում Հարավային-Կովկասի պրակտիկայում:
2. Որոշակիացել են հարավ-կովկասյան տարածաշրջանում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի ներդրման անհրաժեշտության հիմքերը:
3. Որոշակիացվել են մենագրության համար պատրաստվող նյութերը, և հաջորդ եռամսյակի համար արդեն կամբողջականանան:

Հետազոտության այս փուլում արդեն պարզորոշված և մշակված համապատասխան գրականության ուսումնասիրության արդյունքում արված մշակումները թույլ են տվել ուսումնասիրել փափուկ ուժի միջոցով հարավ-կովկասյան տարածաշրջանում կոնսոցիատիվ ժողովրդավարության հիմնական տարրերի ներդրման հնարավորությունները: Խնդրի վերաբերյալ հետազոտական խմբի կողմից կատարված դիտարկումները ցույց են տվել, որ հարավ-կովկասյան տարածաշրջանում ՀՀ-ի սուբյեկտության և գործնական քաղաքականության արդյունավետացման համար, հաշվի առնելով տարածաշրջանային մարտահրավերը, ինչպես նաև քաղաքական գործընթացների զարգացման միտումները, փափուկ ուժի գործիքակազմը կարող է ապահովել բավարար արդյունավետություն:

Հեռանկարում ունենալով տարածաաշրջանի ժողովրդավարացման և անվտանգության պահանջը, հաշվի առնելով նաև բազմական (plurial) հասարակություններում (Վրաստան, Ադրբեջան) տարածաշրջանի անվտանգության վրա բացասականորեն ազդող պոտենցիալի լարումը (խոսքը բազմական հասարակության սեգմենտների բնական

ակտիվության մասին է)՝ հարավ-կովկասյան տարածաշրջանի անվտանգությունը դառնում է շատ փխրուն և պահանջում է անվտանգության մոդելի որոնում և դրա կիրառում: Ակնհայտ է, որ այդ տարբերակը կոնսոցիատիվ անվտանգության մոդելն է:

Ակնհայտ է, որ տարածաշրջանի անվտանգության բաղադրիչի բարձրացումը տարածաշրջանի հարմոնիկ անվտանգությունն է. անվտանգություն, որին պետք է մասնակցեն հարավ-կովկասյան բազմական հասարակությունների բոլոր հիմնական սեգմենտները:

Տարածաշրջանային արդի իրողությունները և քաղաքական գործընթացի զարգացման դինամիկան կրկին անգամ հիմնավորում են սույն հետազոտության արդիականությունը և անհրաժեշտությունը, որի տեսական հանգրվանը պետք է հարավ-կովկասյան բազմական պետություններում փափուկ ուժի գործիքակազմի կիրառությամբ կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի ներդրման հիմքերի մշակումը լինի՝ դրանց բոլոր տեղական շահագրգիռ կողմերի անուղղակի և ուղղակի ներգրավմամբ:

Ակնհայտ է, որ իր արդյունավետությունը տարբեր հարցերում ապացուցած փափուկ ուժը անփոխարինելի նշանակություն է ունենալու այս հարցում: Փափուկ ուժի անդիմադրելի հմայքը տարածաշրջանի կոնսոցիատիվացման համար պետք է լինի ՀՀ քաղաքական վերնախավի արտաքին քաղաքական գործիքակազմի շատ կարևոր բաղադրիչ: Տարածաշրջանի կոնսոցիատիվ ապագան գիտության և ստեղծված պրակտիկայի պահանջն է:

Հետազոտական խմբի ղեկավար՝ **Լ. Ղ. Շիրինյան**

28. 06. 2019